



Մ Ա Ն Կ Մ Ն Յ

թիւ 15

1890

ՅՈՒՆԻՍ 1



ԷՐԱԺԻՇՏՔ ԳԱՐՆԱՆ

ՆՐԱԺԻՇՏՔ ԳԱՐՆԱՆ

Քրնկոյ թունի մ'եգեբէն
մեզ երգեն ,
Մեր սրտերը՝ յ'ալելու
հալելու :
Հերիք յերազ պստանիք
սասանիք ,
Երազ որպէս մի սերել
ի դերել .
Թռչին ի յող , ալ արիք .
դալարիք
Թռչունք , առուք , զուարթասեւ
արդարել
Սիւզն ալ լեռանց կասարէն՝
կասարէն
Գարնան այգուն զհանդէս
ձեզ անսես :
Ահա երգիչ անուշիկ
գան յուշիկ .
Ձեր հետ տունէ զգարուն
նրկարուն :
Օ՛ն փութացէ՛ք այդ անգին
մաղթանքին .
Մասնակցելու անվրդով
սուրբ սրտով .
Ձի Ձեր շրթանց ոլորուն
երգերուն
Միտք լսելու պատրաստած
է՛ք Աստուծ :
Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

ԱՅՅՅԵԼՈՒԹԻՒՆ Մ'Ի ՀՐԱՏ

ՄՈԼՈՐԱԿՆ

(Շարունակութիւն եւ վերջ)

— « Ոչ , բարեկամ ո՛չ . որովհետեւ եթէ ուզէին այս օրունէն կրնային ընել զայդ . սակայն շատ կղզուշանան : Երկրային մարդը փոքրիկ կենդանի մ'է որ մէկ կողմէ մտածելու հարկը չգտար , մինչեւ իսկ հոգւոյ անկախութիւն չունենալով , և միւս կողմէ կռուիլը սիրելով , իրաւունքը , բաց է ի բաց , զօ-

րութեան վրայ կը դնէ : Այս է իր սիրելի հաճոյքն , և այս է իր բնութիւնն . երբէք կարելի չէ փշալից մացառէ մը գեղձեր քաղել :

« Խորհեցէք որ երկրային ամենահեշտաւէտ գեղեցկութիւններ՝ որոց կ'ակնարկէիք քիչ մ'առաջ , կոշտ ճիւղներ են մեր Հրատցի օգային կանանց քով՝ որք մեր գարուններուն օգովը , մեր ծաղկանց բոյրովը կ'ապրին , և որք այնքան հեշտայոյզ են , միմիայն իրենց թււերուն թրթումամբը , և աննիւթական բերանի մը իտէալական համբոյրովը :

« Խորհեցէք որ մեր պատանիներ , իրենէ այնքան գիտնական են , որքան ձեր Պիւթակոր , Արգիմէտ , Քէրլէր , Նէվտօն , Լաբլան և Տարվին ուսումնական եղած են իրենց բոլոր տաժանելի աշխատութիւններով : Մեր տաան և երկու զգայարանքներով մենք համայն տիեզերաց հետ հաղորդակցութեան մէջ ենք . և ասկէ հարիւր միլիոն փարսախ հեռուէն անցնող Արամազդին ձգողական զօրութիւնը , մերկ աչքով կը տեսնանք Պոսիդոնին օղակները . գիսաւորի մը գալուստը կը գուշակենք , և մեր մարմինն թաթխուած է արեգակնային ելեքդրականութեամբ՝ որ բոլոր բնութիւնն կը շարժէ : Հոս երբէք ունեցած չենք ո՛չ տէրութեանց հիմադիրներ , ո՛չ համազգային բաժանումներ , ո՛չ սպատերազմներ , այլ ի սկզբանէ անտի մենք բնապէս խաղաղասէր , և ամէն նիւթական սխտոյքէ ազատ ապրած ենք , անկախ մարմնով և հոգւով , մտային յարատեւ գործունէութեան մը մէջ , անդադար բարձրանալով ճշմարտութեանց ծանօթութեանց մէջ : Բայց հաճեցէք քիչ մը մեր ետեւէն գալ » :

* *

Լեռան գագաթը քանի մը քայլ առի խօսակիրներու հետ, և միւս զառիվարին բարձրը հասնելով երիներանգ լոյսերու բազմութիւն մը տեսայ՝ որք օգերուն մէջ կը թռչէին։ Ասո՛ք Հրատի բնակիչներն էին՝ որք գիշերը եթէ կ'ուզէին լուսաւոր կ'ըլլային։ Օգաչու կառքեր, կարծես փոսփորափայլ ծաղիկներէ շինուած, երաժշտախումբեր և յաւերժահարսանց գունդեր կը տանէին. անոնցմէ մին մեր քովէն անցաւ, և անուշաբոյր ամպի մը մէջ նստեցանք։ Զգացած հաճոյքներս տարօրինակ կերպով տարբեր էին երկրի վրայ ճաշակած բոլոր հաճոյքներէս, և Հրատի վրայ անցուցած այս առաջին գիշերս երազի մը պէս արագ՝ սահեցաւ անցաւ. ըստ որում արշալոյսին, տակաւին օգագնաց կառքին մէջ կը գտնուէի, դրացիներուս անոնց բարեկամներուն, և աննկարագրելի ընկերուհիներուն հետ խօսելով։ Ի՞նչ դեղեցիկ համայնապատկեր ի ծագել արեգական։ Ծաղիկներ, պտուղներ, անուշահոտութիւններ, դիւթահրաշ պալատներ, նարնջափայլ բոյսերով բեռնաւորած կղզիներուն վրայ կը բարձրանային։ ջուրերը իբր վճիտ հայելիներ կը տարածուէին, և օգաբնակ հոգեզուարթ ամուլներ լիայորձան կիշնային, այս կախարդիչ եղերաց վրայ։ Հոն, բոլոր նիւթական աշխատութիւններ մեքենայներով կը կատարուէին՝ զորքս կը վարեն տեսակ մը կատարելագործեալ կենդանիներ, գրեթէ երկրային մարդոց իմացականութեան հաւասար իմացականութիւն մ'ունենալով։ Բնակիչները միայն հոգւով և հոգւոյ համար կապրին։ Իրենց ջղային դրութիւնը զարգացման այնպիսի աստիճանի մը հասած է որ այս էակաց իւրաքանչիւրն, — միանգամայն շատ զօրեղ և շատ փափուկ —, ելլկտրական գործիքի մը կը նմանի, և իրենց ամենահեշտաւէտ տպաւորութիւններն՝ զորս աւելի իրենց հոգւով կղզան քան թէ

մարմնով, մեր երկրային հինգ զգայարանաց ամբողջին միատեղ ազդած՝ տըպաւորութենէն հարկւր անգամ զօրաւոր է...։ Այն պահուն նորածագ արեւուն ճաճանչներովը լուսավառ՝ տեսակ մը ամառնային պալատ կը բացուէր մեր օգաթռիչ նաւակին տակը։ Իմ գըրացուհիս՝ որոյ թեւերը կը թռթռային անհամբերութենէն, իր փոքրիկ ոտքն դրաւ ծաղիկ փունջի մէջ վրայ՝ որ կը բարձրանար անուշահոտութեանց երկու շատրուաններու մէջ տեղ։ — « Երկրի վրայ պիտի վերադառնա՞ս » հարցուց, բազուկներն ինձ կարկառելով...։ — « Երբէք » գոչեցի, անոր վրան խոյանալով։

* *

Բայց միևնոյն շարժումով, ինքզինքս իմ մենաւորիկ անտառիս մէջը գտայ՝ այն բլուրին զառիվարին վրայ՝ որուն ստորոտը Սէն գետը կը սողոսկէր վէտ ի վէտ, մանուածապատ ճամբայներով։

— « Երբէք... » կը կրկնէի անցած սահած քաղցրիկ երազս վերըմբռնել ջանալով։ Ո՛ւր էի ուրեմն։ Եւ ո՛րչափ ալ հեշտալիւ էր։

Սրեւը մարը կը մոռնար, և արդէն Հրատ մուրակն յոյժ գեղապայծառ կը վառէր այն պահուն, երկնից մէջ։

— Ա՛հ, ըսի, խելքս գլուխս գալով, հո՛ն էի։ Միևնոյն ձգողութեան վրայ օրորուելով, երկու դրացի մուրակներ իրարու կը նային, ջինջ ու յստակ անջըրպետին մէջ։ Պէտք չէ՞ր որ այս երկնային եղբայրութեան մէջ, յաւիտենական ուղեւորութեան մ'առաջին պատկերն առնէինք։ Երկիրը աշխարհիս մէջ միակ չէ։ Անհունութեան համայնապատկերները բացուել կ'սկսին։ Թո՛ղ մենք հոս կամ քիչ մ'անդին բնակած ըլլանք, երկրի մը կամ աշխարհի մը քաղաքացիները չենք, այլ ճշմարտիւ, երկնից քաղաքացիները։

ՔԱՄԻԼ. ՖԼԱՄԱՐԻՈՆ

Թարգ. ի Գաղ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՊԱՄՐԱՆՅԱՆ

(Մուսումնաւ Բաւա)

— 330 —

ՎԻՅԵՆԱ ԸՍՈՒԱԾ 02Ը

Բիթօն կոչուած օձերը, որք կորուշուին Պօա և Գուլէօլը ըսուած կենդանիներէն, նշանաւոր են իրենց մեծութեան կողմանէ: Այս տեսակ անասնոց մէջ, բազմատամբ Պօա կոչուած

ծուածկ, նշանաւոր կապով մը արմատէն զատուած, պոչերնին երկայն ծայրը թեւ մը երկնցած, միանգամայն անփափաք և մարդոց հետ ընտելութեան չափ մօտ, սնունդնին մուկ, մողէս, գորտ, թռչնոց հաւկիթ և ուրիշ սողուններ, ինչպէս նաև ուրիշ շատ տեսակ անասուններ՝ որք թէ և իրենցմէ



Վիբէն և իւր ձագերը

օձին հասակին և ուժին կողմանէ, յառաջ բերենք էգ Բիթօնը՝ որ իւր հակիթները մարմնոյն ծալքերուն ներքեւ առնելով տեսակ մը թուխի ձեւ կուտայ:

Իսկ Գուլէօլը կոչուածներուն բընութիւնը խիստ տարբեր է, գլուխնին

մեծ, բայց գլուխը կուլ կուտան, մողէսներուն պէս չունջ առնելով ջուր կը խմեն, կըսեն ալ թէ գլխովին կովերու պծերու հետ կը կուտին, բայց անհիմն է:

Աստեք հաւկիթէ դուրս կեննեն, էգը մէկ անգամուն 15 կամ 20 հաւկիթ

կ'ած է աւագին մէջ կամ տերեւներու տակ
կը ծածկէ և կը թողու արեգական տակ :

Ասոնց տեսակները շատ են որոց
գլխաւորն է մանեկաւոր Գուլէօլը ըս-
ուածն՝ որ հասարակարար մեր կը-
լիմայներուն մէջ կը գտնուին և անոյշ
ջրով ոռոգուած մարգագետիններու մէջ
կը բնակին : Սե տեսակ մ'ալ կայ որ
9 1/2 կանգուն երկայնութիւն ունի և
որ հարաւային Ամերիկայի մէջ կը գը-
տնուի :

Թունաւոր օձերը երկու տեսակ են ,
որոց նշանաւորը մի եղջերաւորն է , որ
բերնին մէջ երկու կարգ պզտիկ աճա-
ներ ունի բայց ծամելիքին կտմը երկու
սուր ափամերով զինեալ է : այս ափ-
ռաները , հանգստեան ատեն բերնին
մէջ ամանով մը կը ծածկէ և պէտք ե-
ղած ատենը դուրս կը հանէ որոցմէ
թոյնը կը հոսեցնէ իւր խածած տեղայն
վրայ և թոյնն այն ատեն կը ներգործէ
երբ արեան հեա խառնուի , և եթէ ուզեն
թունաւորեալը ազատել , խայթումը
ծծելու է սրպէս զի թոյնը դուրս ելնէ :

Մտաւոր կարողութիւննին ալ տեղն
է , երբ որ ուզեն կենդանիները թա-
կարթի մէջ ձգել , այնպիսի սպառնա-
կան կերպով կը նային անոնց վրայ որ
իրենց որս ըլլալիք կենդանիները վա-
խերնուն կեցած տեղերնին կը մնան և
գիւրաւ կը բռնուին :

Ասոնք երեք տեսակ են , Վիլիւ ,
Դոօթալ և Թուիօցուէֆալ :

Վերջոները պզտիկ կեղևներով ծած-
կուած գլուխ մ'ունին որոց հասակը 60
կամ 70 սանթիմէն աւելի չէ : Գլուխ-
նին հարթ եռանկեան V գրին ձևով ,
որուն ծայրը դէպի քթին դարձած է ,
դոյներնին ալ տարբեր է կարմիր մոխ-
րագոյն և սեւ :

Վերջոնը՝ որ հասարակօրէն ապառաժ

քարով և կրտսիթով լեցուած անտառ-
ներուն մէջ կը գտնուի , մանաւանդ ի
Ֆրանսա , կարծուածէն աւելի վտան-
գաւոր է , պէտք եղած ատենը կը խած-
նէ և վէրքը մահացու է միշտ :

Այս անասունը 15 կամ 18 ձագ կը
ծնի , երբ օգը մաքուր է և արեգակը
ոտք մայրն իւր ձագերը արեգակին դի-
մացը կը հանէ կը լիզէ , կը վարժեցնէ
և խնամով կը հսկէ , ինչպէս հաւ մը իւր
վառեակները , այնպէս որ եթէ մին հե-
ռանայ կ'ստիպէ զանի իւր եղբարցը քով
երթալու , մեղմ կերպով գլխովը հրե-
լով և վտանգի մը ատեն սուղելով զա-
նոնք իրեն կը կոչէ գլուխը հոգին վրայ
կերկնցնէ , կտկորդը կը բանայ , և բո-
լոր ձագերը սարսափահար կուգան կը
թափին արտօնօք ստամոքսին մէջ , այս
ընելէն վերջը կը փախչի : կը թուի թէ
երկար ատեն մէջը կը մնան :

ՄԱՐՏԻԿ Յ. ԳԱՐԱՅԵԱՆ



ԲԱՐՈՅԻԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Ինչպէս որ կոյրը վարդի մը մօտե-
ցած ատեն , անոր անուշաբոյր հոտէն
կ'իմանայ վարդին գեղեցկութիւնն ,
նոյնպէս երբ խոնարհութեան հոտ առ-
նուս , ապահով եղիր որ ճշմարիտ ար-
ժանեաց մօտ կը գտնուիս :

— Պարտաւորութիւնն և այս օրն
մերն են : արգիւնքն և ապագայն Աս-
տուծոյ կը վերաբերին :

— Գէշ ախար կը բժշկուի , իսկ գէշ
համբաւը անբուժելի կը մնայ :



Պ Է Պ Է Ք Ը

- « Կ'իմանա՞ն, Ջարէհ, եթէ այս ամառ
 « Զ'ըլլաք չափազանց անառակ յամառ,
 « Հըրանսին եւ քեզ — եղբայր կամ քուրիկ,
 « Կարմիր ու ներմակ, անոյժ, աղւորիկ,
 « Կըլորիկ դէմքով նըմանակ լուսնի —
 « Պարսէզը պէպէք մը պիտի բուսնի... : »
- « Այդ բան չեմ տեսնուի ես մինչեւ հիմայ,
 « Ծաղի՛կ է պէպէքն որ բուսնի, Մամա՞յ... : »
- « Մեր պարսէզին մէջ չը՛ բուսնիր, Տըվա՛ս,
 « Այլ որպէս զի դու միշտ հետք խաղաս,
 « Սիրես ու պագնես, զայն, Աստուած պարպան
 « Իւր դըրախտին մէջ, իբրեւ պարսիզպան,
 « Պիտի բուսցունէ... Օր մ'ալ երկինքէն
 « Հրեշտակք պէպէքը վար պիտի ձըգնէ... : »
- « Վար պիտի ձըգնէ՞ն, Մամա՛յ, յիրաւի՞... : »
 « Զըլլա՛յ պէպէքին մէկ տեղը ցաւի... : »

ԱԼՓԱՍՈՒՆ



ՓՐԿԱՐԱՐ ԴԵՂԱՀԱՏ ՄԸ

Աղետալի պատերազմի մը ժամանակ յորում Գաղղիական բանակը մեծ կոկորուստներ ըրաւ, զիւղաքաղաքի մը մէջ երկու անձեր զինուորագրութեան կանչուեցան որոց մին պիտի ամբողջացընէր որոշեալ թիւը։ Առաջինն հարուստ ագարակապետի մը որդին էր, իսկ երկրորդն աղքատ այրի կնոջ մը զաւակն։

Ագարակապետն ուզեց իւր աղջեցուն թիւնն ի գործ դնել վերատեսչին վրայ եւ խոստացաւ նմա գեղեցիկ նուէր մը, եթէ իւր որդին բանակը զրկելէ արգիւլեւու միջոց մը գտնէր։ Սակայն վերջինն զայդ կատարելու մասք ստիպրին

մէջ երկու սե գնդիկներ նետեց, փոխանակ մին ճերմակ եւ միւսն սև լինելու։ Երբ երիտասարդք եկան, ըսաւ։ « Ստիպրին մէջ սև եւ ճերմակ երկու գնդիկներ կան, ով որ սևը քաշէ բանակ պիտի երթայ։ »

Այրի կնոջ որդին ամէն ինչ ճիշդ լինելուն վրայ կասկած ունենալով, ստիպրին մօտեցաւ եւ դուրս հանելով գնդիկներէն մին, անմիջապէս կլլեց առանց վրան նայելու։

— Ինչո՞ւ այդպէս բռնի, ըսաւ վերատեսուչն, ինչպէ՞ս պիտի հասկնանք թէ առած գնդիկդ սև կամ ճերմակ էր։

— Գտնելը շատ գիւրին է, պատաս-

խանեց , թոյլ տո՛ւր որ միւսն ալ քա-
շեմ , եթէ նա սե լինի , ուրեմն իմ կըլ-
լած գնդիկը ձերմական է :

— Վերատեսուչն չկրցաւ մերժել , եւ
ազարակապետին որդին , ձեռքը սա-
փորին մէջ երկնցնելով , դուրս հանեց
մնացեալ գնդիկն որ ի մեծ զոհունա-
կութիւն հանդիսականաց մեծագոյն մա-
սին , սեւ էր : Այրի կնոջ զաւակը այս-
պէս փրկուեցաւ և միւսը ստիպուեցաւ
ծառայել բանակին , կամ իւր տեղ փո-
խանորդ մը գտնել :

Մ . Գ . Մ .

Մ Ա Յ Ի Ս Ի Ա Մ Ի Ս

Ն Մ Ա Ն Ո Ղ Օ Ր Է Ն

Քանի՛ սիրուն քանի զըւարթ
է Մարերի պըսակազարդ ,
Ի քաղցրասիւզ շունչ գեփիւոյի
Մեղմիկ յորտ կը քսուանի ,
Եւ զծաղկանեմ ծածկեալ անսառ
Սաւառնաքել քեքեւապար
Նորոգելոյ բնութեան համայն
Մեծ աւեթիսայ խընդութեան :

Սակայն հազիւ քէ մեղմաբար
Յերկիր հակեալ զմառոց կասար ,
Զեփիւռ փըչեալ սիւզ զովափին
Սահի երթայ ի խորս հովքին .
Ահա ծաղկեալ ծառեր անդէն
Կը մերկանան իւրեանց զարդէն ,
Աւար աւեան կ'ծածկէ գերկիր ,
Տարուբերեալ հովոց ցանցիր :

Նոյն ի ծողիկ իսկ հասակի
Նորածին սիւս մեր բերկրալի
Զապազայի եղանկուրիւն
Անվերէպ իստեմ կարծէ վաղուն ,

Եւ պատարուն քաղցրիկ յուսով
Ի հանգըսեան կայ անվրդով ,
Որպէս քըռչնիկըն թիթեռնիկ
Յանուշաբոյր ծաղկան ծոցիկ .

Անյագ աչքով ի կեանս աստի
Սիրահարած միտք կը նայի ,
Եւ կը իտեմ անդ հանդիմեն
Հետք ցանկութիւն , զըրզանք եւ սէր ,
Սակայն սուալ ծաղկունք յուսոյ
Կենցաղասէր մեր հէ՛ք ոգւոյ
Կը քօթափին օր ըստ օրէ
ձըւմարտութեան դասն հընչէ :

Ամասիա

ՄԻՀՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Աւերս . Միացեալ վրժմի .

Կեդր . եւ Գաբոնսից . Ընկ .

Հ . Ղ Ե Ի Ո Ն Դ Վ . Ա Լ Ի Ճ Ա Ն

Մայիս 13/25 , կիրակիէ օր , Վենետիկոյ
Միթիթարեան հարց վանուց մէջ մեծաւ
չքով տօնուեցաւ Հ . Ղուկաս Լազեանի ,
Հ . Աբրահամ Վ . Ճարեանի և Հ . Ղևոնդ
Վ . Ալիշանի քահանայական ձեռնադ-
րութեան յօրեւեանը :

Հ . Ղուկաս Վ . Լազեան և Հ . Աբրա-
համ Վ . Ճարեան , մեծամեծ ծառայու-
թիւններ մատուցած են Վենետիկոյ
Միթիթարեան վանուց , առաջինն իբր
արուեստագէտ , երկրորդն թէ՛ մատե-
նագիր և թէ՛ տեսուչ Մուրադ-Ռաֆիա-
յէլեան վարժարանի , որու խնամոտ հո-
գածութեան ներքեւ դաստիարակուած
են բազմաթիւ աշակերտներ , որք այ-
սօր նշանաւոր տեղ մի կը դրաւեն ազ-
գին և առևտրական ասպարէզին մէջ :

Իսկ Հ . Ղևոնդ Վ . Ալիշան , որոյ նը-
շանաւոր գործերն ո՛չ միայն Վենետիկոյ
Միթարանութեան , այլ ընդհանուր Հայ
ազգին պատկանելուն համար , կ'ուզենք

համառօտակի դնել աստ նորա կենսագրութիւնն :

Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան Հայ գրականութեան մեծագոյն դէմքերէն մին է , նշանաւոր իւր հայրենագիտութեամբ , Հայ ազգին սլաոմութեան , ցեղագրութեան և աշխարհագրութեան վրայ կատարած աշխատասիրութեամբ և գիտնական ուսմանց մէջ ունեցած հմտութեամբ :

Հ. Ղեւոնդ Ալիշան ծնած է 1820 , յուլիս 10ին , ի Կ . Պօլիս : Հօրն անունն Պետրոս Մարգար Ալիշան : Իւր նախնական ուսմունքն առաւ Բերայ Հ . Անտոնիայի հիմնած վարժարանին մէջ . Բերայի մեծ հրդեհէն յետոյ մտաւ Հ . Վերթիշի մէջ Զաւրիսեանի ի Ղալաթիա հիմնած վարժարանը : 1832 ին Վենետիկի գնաց և 1840 յունիս 7 ին քահանայ ձեռնադրուեցաւ : 1858 ին Փարիզու Մուրատեան վարժարանը զրկուեցաւ , տնօրինին , Հ . Ռաֆայէլ Թսեանցի հիւանդութեան պատճառաւ և անոր մահուանէն վերջ , ինք անուանեցաւ տնօրէն և այդ պաշտօնը մինչեւ 1862 չարունակեց : Իւր տնօրինութեան թուականը փայլուն եղաւ . սիրելի էր իւր ամէն աշակերտաց , այցելուաց , և ամէն տարի մրցանակաբաշխութեան հանդէսներուն մէջ Ֆրանսերէն լեզուաւ արտասանած բանախօսութիւններն առանձին տետրակներու մէջ տպուելով , թէ իւր և թէ վարժարանին համբաւը տարածեցին օտարազգեաց առջեւ :

Իւր բարոյական նկարագիրն ամբողջովին դժեւ մեր կարողութենէն վեր լինելուն , աստ կ'արտատուենք իւր մի աշակերտի նկարագրութիւնն , որ հըրատարակուեցաւ Աքեւեյօ օրագրի մէջ :

« Ազգաստեանցներու յիսերիմ թշնամի էր : Նշանաբանն է կռօն և Ազգասիրու-

թիւն : Զայտսիկ իրարմէ չէր կրնար բաժնել : Ըսաւ օր մը , Զգիտեմ թէ ազգասեաց ոք որպէս կրնայ մտնել յարժանութիւն երկնից : Մինչ ի Մուրատեան վարժարան , Հ . Ղեւոնդ անդադար կ'աշխատէր իւր աշխարհագրական եւ սլաոմական երկասիրութեանց , կարծես հրաժեշտ տուած էր բանաստեղծութեան , քանզի այն երեք տարիներու մէջ ո'չ ոք տեսաւ նորա բանաստեղծական երկ մը յօրինելն : Ստարք և ազգայինք կուգային զինք տեսնել , Պարզութեամբ և մեծ վայելչութեամբ կ'ընդունէր : Էր բարձրահասակ , վառոյժ , լայն ճակատ , սև մօրուք , անպաճոյճ բայց մաքուր , անպատմելի քաղցրահայեաց աչիւնք , յորոց բոցեր կը ցուլայնեն երբեմն իւր սրտին սիրելի նիւթոյ վրայ ճառելու ժամանակ : Իւր սրտիկոն վարքով և անկեղծ բարեսլաշտութեամբ օրինակ էր իւր կրօնաւոր ընկերաց , որք արդ կը գուրգուրան նորա վրայ , և կը պանծան ի նա :

« Իսկ հիմա , ալեւոր ծերունի մ'է : Շատ օտարականներ և Հայեր կ'երթան զնա տեսնելու՝ իրբեւ ուխտաաւելի՝ նորա սենեկին մէջ : Գեր . Ազարեան Պատրիարք , յեւրոպա վերջին ուղեւորութեանն առթիւ Վենետիկէ անցնելով , գնաց Ս . Ղազարու վանք , և իմասնաւորի այցելեց Հ . Ղեւոնդի սենեակին , ողջունելու հայութեան հիանալի փառքն ու պարծանքն : Հ . Ղեւոնդ չէ կորուսած իւր հօր յիշատակն , այն հօր որ զինք ի մանկութենէ անտի կը սիրէր իւր ուսումնասիրութեան համար : Պատին վրայ , գրասեղանին մօտ կախուած է հօրը կենդանագիրը՝ գունաւոր՝ այն ժամանակուան զգեստով , մուշտակ , գալլիագ , և այլն : Ի մանկութեան , ուրիշ տղոց հակառակ , խաղերէ խոյս



Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ

կուտայ և հանապազ գիրքերով կը սլա-
րապի եղեր: Հայրն ալ ուրախութեամբ
քովը կը նստեցնէր, « Ուսումնասէր
զաւակս » կոչելով զնա: Հ. Ալիշան չատ
կը սիրէ իւր աշակերտներն: ո՛չ զոք
մոռցած է անոնցմէ. զամենքն ալ որոշ
կը յիշէ: Անոնցմէ ով ոք, — կամ ուրիշ
ո և է անձ, — եթէ թուղթ գրէ, ան-
միջապէս կը պատասխանէ . . . :

« Իւր արդի կեանքն է՝ մինչեւ կէս
օր եկեղեցի, աղօթք, մտածութիւնք
հոգեւոր և հանգիստ: Կէս օրէն ետքը՝
մտաւորական և գրական աշխատութիւն
սենեկին մէջ: »

Հ. Ղեւոնդ Ալիշանի սոյն բարոյական
նկարագրէն յետոյ, աւարտելու համար
մեր յօդուածը, կ'աւելցնենք աստ
իւր գրական նկարագիրն:

Հ. Ղեւոնդի գրականութեան վրայ
գաղափար մ'ունենալու համար պէտք է
տեսնել նորա մէն մի գործն, որոց գըլ-
խաւորներն են Յուլիէ, հսկայ աշխա-
տութիւն մ'ուր կը պատկերանան աղ-
գին՝ պատմութենէն երեւելի դէպքեր, և
ուր բանաստեղծական բարձրաթիւ լե-
զուաւ մը տրուած են կրօնասիրական,
ընկերական և անհատական առաքինու-
թեանց ընտիր դասեր: Ծիրակ և Սիս-
ուան գեղեցիկ հաւաքածոյ մը, աղգին
հնախօսութեան, ցեղագրութեան, աշ-
խարհագրութեան և տեղագրութեան.
Իւր բանաստեղծական համբաւաւոր եր-
կոց մեջ նշանաւորներն են, 'Նուագներն,
Հայոց ռաւիկական երգերն, 'Նելսարքն ու
'Նումարքն: Եթէ աւելցնենք այս ընտիր
աշխատասիրութեանց վրայ բազմաթիւ
գեղեցիկ թարգմանութիւններն զորս ը-
րած է նշանաւոր հեղինակներէ և բա-
րեպաշտական գործեր, որոց ծնունդ
տուած են իւր կրօնասիրական բարձր

ներշնչումներն, կ'ունենանք, Հ. Ղեւոնդ
Ալիշանի գրական գործունէութեան մի
գեղեցիկ պատկերն:

Հ. Ալիշան իւր մայրենի լեզուէն զատ
գիտէ լատիներէն, յունարէն, իտալե-
րէն, Ֆրանսերէն, գերմաներէն, անգ-
լիերէն, թուրքերէն, պարսկերէն եւ
արաբերէն, որոց շնորհիւ յաջողած է
ընտրելագոյն աղբիւրներէ քաղել իւր
գործոց նիւթերն:

Հ. Ղեւոնդ Ալիշանի նման անձ մ'որ
իւր զգացմանց և մտաւորական բարձ-
րութեամբ նշանաւոր եղած է՝ փառք
մ'է Հայ ազգին համար, որ այսօր ի
բոլոր սրտէ կը մաղթէ երկար տարիներ
տեսնելու համար նորա գրական գոր-
ծունէութեան գեղեցիկ յօբեւանը:

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԻ ԾԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ծերունին կը մօտի տակաւ կե-
նաց ծայրն. կենաց զանազան շրջաննե-
րէն անցած է, անցուցած է մանկական
անմեղ և բազմահրապոյր կեանքն, ըն-
դունած է այն սակեղինիկ տարիներու
մէջ ծնողաց զգուանքն, ճանճանչած է
նորա լուսահրատ ճակտին վրայ քրոջ մը
խանդակաթ ժպիտը, ունեցած է իւր
ընկերներն, որոց հետ խաղացած է բըլ-
րոյն կողն, անտառին խորն, առուա-
կին եզրն. ի՛նչ սիրուն խաղեր, իւր
չօրնդ ու աղմուկ խառնած է թռչու-
նին երգին և առուակին խոխոջին, կը
յիշէ նա յայնժամ տօնի օրերն, երբ
հազուած, զուարթ աղաղակներ կը
բառնար, և ի՛նչ ուրախութիւն իրեն,

երբ կուգար կազանդն ձիւնոտ ոտքերով, առատ միրգերով, և խաղալիկներով առատ, երբ ինք, մանուկ դպիր, կերթար յեկեղեցի Ծննդեան առտուն, Խորհուրդ մեծը երգելու, Յիսուս մանուկն տեսնելու լուսափայլ մսուրին մէջ խոտի ճիւղերուն վրայ, բանաստեղծական պարզութեան մի մէջ: Կը յիշէր Զատիկն, քրիստոնէութեան յաղթանակի այն մեծ օրն, երբ հայրենի տունը կը լինէր կեդրոն համակիր սրտերու, ուր կը տեղային բարեմաղթութիւնք, երբ ընտրութիւնն ալ օրուան տօնին առթիւ նորոգ կը ծաղկէր և կը ծաղկէին սրտերն երանութեամբ, կը յիշէր դպրոցն, այն եղեմային վայրն՝ որոյ մթնոլորտ համակուած էր անուշահոտութեամբ, ո՛հ, սիրալիլ յիշատակք:

Բ. Կը յիշէ երիտասարդութիւնն, այն յուզեալ տարիներու մրրիկներն, ուր կեանքը այնքան նաւաբեկումներ կը կրէ, ինքն յայնժամ եռանդ և գործունէութիւն էր, մերթ կը տառապէր, մերթ կուրախանար, կարհամարհէր վտանգն ու երկիւղ, կերգէր ուրախութիւններն, կը կրէր պատրանք, տըխրութիւններ, որպէս թեթիւ ամպեր իւր կենաց երկնքին վրայ. մերթ կեանքը այնքան ժպտուն կ'երևնար, ինք կը թռէր յուսոյ և երազի աշխարհն, կը մղէր կենաց պայքարն այնքան արի և անվեհեր, և հուսկ ուրեմն կանգ առած յաղթութեանց պատուանդանին վրայ՝ դափնեպսակ կը դռչէր. « Ի՛նչ վեհ է երիտասարդութիւնը »:

Դ. Կը յիշէ այրութեան հասակն, եղած էր հայր որդեգորով, կրած կենաց տխուր փորձերն, կորուսած էր յաւէտ իւր ծնողքն, կազմած էր ընտանեկան

վառարանն, երջանիկ էր իւր մանկիկներով, իւր սիրոյ դրախտին այն թըռչուններով, ի տես նոցա մուցած էր ամէն տառապանք, քաղցրացած էր իւր ճակատագիր, ո՛հ, ո՛րքան լաւ գործերու կը մասնակցէր, կրթութիւնն իբրեւ կաթն ջամբած էր իւր որդւոց, իւր ուստերաց՝ զի լինէին բարի, ժրջան, նախանձելի, իւր դստերաց՝ զի լինէին բարեմոյն, համեստ, անտեսող:

Դ. Եւ այժմ հասած է ծերութեան, իւր գլուխն ալեւորեալ է, չգործէր այլ եւս, իմաստութեան տաճար մի է իւր խցիկ, հոն են որդիքն և թոռունք, կը լսեն փորձառութեան դասերն, խորին պատկառանք կաղդէ նա, իւր անցեալ տարիներու յիշատակներն կապոյտ քօղի մը ներքեւէն կը ժպտին իրեն, կամաց կամաց կը պատրաստուի մահուան, կատարած է իւր պարտքերն, պաշտած է իւր առաքինութեանց թերափներն, այժմ կը մնայ միայն մրցանակ ընդունիլ, ահա մահու հրեշտակն իբրեւ երջանկութեան աւետարներ կը մատչի նմա, գոհ պիտի մեռնի, զի իւր կեանքն իբրեւ խաղաղիկ առուակ ուղած է, և իւր մահն պիտի լինի վերածնիլ անդէն երանութեանց մէջ:

Ս. Գ.

ԱՇԽԵՆ ՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

(Բառնյակում վեպ)

Տարուան այն եղանակն էր յորում ընտրութիւնն իբրեւ նոր-հարս գեղեցիկ իմն կը պճնի:

Շաբաթ երեկոյ մի, երբ երկինքը

պարզ էր, Վարդանուշ՝ որ հազիւ տասը գարուն բոլորած էր, մտենալով Աշխէնի քով:

— Քո՛յր իմ, երթանք պարտէզ, ըսաւ, տեսնելու համար թէ ի՞նչ վիճակի մէջ են այսօր մեր ծաղիկները:

Աշխէն սիրով ընդդրկեց փոքրիկ քերով առաջարկը և երկուքը միասին յառաջացան պարտէզ, ուր կային նուազ տեսակ տեսակ ծառեր և թփեր, և միեկին իրենց քայլից փոխերն այն երփներանգ առարկայից քով՝ զորս յանշարժ կը սրբէր Վարդանուշ:

— Աշխէն, նայէ՛, ի՛նչ հիանալի գոյն ունին, իրենց սիրուն դէմքերը զիս կը հրապուրեն և իբրեւ մագնիս առ յինքեանս կը ձգեն իմ սիրտ, ուստի չեմ կարող՝ առանց սէրս արտայայտելու, անոնցմէ հեռանալ:

Եւ սկսաւ ընտրանօք փրցունել, զորն կարգաւ շարելով խարտեալ մագերուն ի ձեւ բուրակի:

— Յարմարեցա՞ւ, քոյր, ըսաւ, մատնանի ընելով ծաղիկները. կա՞յ արդեօք մի պակաս տեղ, որ աչքի զարնէ:

— Օ՛, խօսք կա՛յ, հրեշտակ մը դարձար, գոյները դէմքիդ վրայ կը խայտան, կարծես թէ լինէիր այն անպերը՝ զորս վերջալցսի արեւը գոյնզգոյն կը նկարէ: Բայց գիտե՞ս Վարդանուշ, ա՛յն ժամանակ այդ սքանչելի դրութեան մէջ չեն մնար այն ամպերը, արեւն իւր հրաժեշտի ողջոյնն աշխարհի տալէն վերջ, կը լինի այնպէս, որպէս յառաջագոյն: Մի՛ ուրախանար այդչափ, չուտով կը թառամին և հետեւարար վազ ընդ փոյթ խոյս պիտի տայ ի քէն այդ պատկերը, զոր կը կրես դու այժմ ընդ նմին զգացած ուրախութիւնդ. ալ, ըսաւ վերջապէս, որ կուզէր յարգել լուութիւնը:

— Հապա ի՞նչ ընելու է, հարցուց անհամբերութեամբ, որ միշտ գործածուին դժբաղ զխուս ի զարդ:

— Հոգ տանելու է, պատասխանեց հեգնութեամբ: Պարտիս խնամել, արեգական ճառագայթից յանձնէ, յայնժամ իրենց տեսքերը չկորսնցնելէն ի զատ՝ կարի իմն մուշկի նման կը բուրեն և դահարի նման կը փայլին:

— « Բերանդ բացիր սիրտդ տեսայ » կ'ըսէ Հայ-առածը: Թող թառամի՛, դա հոգ չէ, հայրիկիս կ'ըսեմ, որ արուեստական ծաղիկներով հիւսուած նոյն իսկ պսակ առնու, կարծեմ թէ ա՛լ իրաւունք պիտի չունենաս վրաս ծաղրելու, ըսաւ սիրտը լի դառնութեամբ:

— Մի՛ բարկանար, ըսաւ լրջութեամբ, բայց այդ պսակդ ալ հոտ չունի, ա՛լ աւելի պիտի բերկրիս, երբ, բուրումէն քիթդ խնայ:

— Անուշահոտ ջրով կը ցօղեմ, պատասխանեց բաւական վստահութեամբ:

— Սակայն այդ քաղցրաբոյր հոտն ալ կը ցնդի, կ'անհետանայ, և դու պիտի պարտաւորիս՝ երբ ուղես անցնել գլուխդ, անուշահոտ ջուր միացնել այդ պսակին հետ: և թէ միանգամայն այդ պսակն ևս կը վնասուի ձեռքի շփումէդ և ջրէն կը կորսնցնէ իր փայլունութիւնը, գլխէդ վեր-վար առնելէդ և հետը խաղալէդ կը ձգմի և կը բեկանի օր մը չէ՝ օր մը: Ապա ուրեմն աշխատելու է ձեռք ձգել այնպիսի պսակ, որը զերծ է այդ անպատեհութիւններէն:

— Ո՞րն է քոյր իմ այդ պսակը, հարցուց հետաքրքրութեամբ, հոս կա՞յ արդեօք, հայրիկիս օձիքը բայց չպիտի թողում մինչեւ որ բերէ:

— Մտի՛կ ըրէ՛ ուշադրութեամբ: Այդ պսակը մարդու առաքինական գործերն են: Դու գիտես թէ ի՛նչ է առաքինու-

թիւնը, — ընեւ այն ամէնն՝ ոյք առ Աստուած կը մերձեցնեն զմեզ. միշտ աշխատիլ, ընթանալ ի բարին ի սէր Աստուծոյ և յօգուտ մեր ընկերոջ և նոյն իսկ մեր անձին: Ահա սոքա պիտի լինին զխաւորապէս մեր սիրելի զրազմունքը. մեր կերպարանքին զարդարանքը, և ոյք կ'ազնուացնեն մեր սիրտը, կը լուսաւորեն մեր սիրտը և հետեւաբար զմեզ անթառամ ծաղկի պէս անթարշամ կը պահեն:

Վարդուհի առ ժամ մի ձեռն ի ծնօտ տարած՝ խորհելէ զկնի:

— Շատ ճշմարիտ է՝ ըսածներդ, անուշիկ քոյրս, գոչեց զգածուած՝ պըլլուելով խանդաղատանօք նորա վզին: Նայէ՛ սա թոթափած վարդի տերեւներուն, ուրեմն ժամանակաւոր են ասոնք, ակնարկելով ծաղկունքը, մի քանի օրուան կեանք կը ներշնչեն, անկէ վերջը կը դադրին ապրելէ — կը մեռնին...

ԲԱՂԱՐԱՏ Գ. ԳԱՎԱՖԵԱՆ
Կարին

→→→ ԵԵԵ ←←←

ՀԱՄԱՐԱՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԻՄՆԱՅԻՆ ԲՆԻՆԻ

ԵՐԿԻՐ ՓՐԱՆՍՈՒՍ ԺՕԶԷՖԻ

ԵՒ

Ծ Ո Վ. Ն Ո Ր - Զ Է Մ Պ Լ Ա Ի

ԳԼՈՒԽ Զ.

Պատասխանիմք մի նոր քեռեային ուղեւորութեան համար. — Առաջին արշաւանք բալխիւրով. — Հաշ և Մաք Բրեքով կղզիներն. — Թեկեթով հըրուանդանն. — Բռիշի մահն և յուրակաւորութիւնն.

(Շարունակութիւն 13 քիւէն)

Արշաւանքը մեկնեցաւ մարտ 10 ին, մեծ բալխիւրով մը, որ ունէր շարաթ-

ուան մը պաշար և որոց կ'ընկերանային Հալլէն, Բլոյ, Լաքինօվիչ, Գաթաուինիչ, Բօթիչէլ, Լիթթէս և երեք չուներ, Ժիլլիս, Թօռօսի, և Սուսպու:

Հալլէ թէ՛ անցած էին սառնակոյտներէն, երբ նշմարեցին իրենց ետեւ սեաւ բիծեր, որք արագաբար իրենց կը մօտենային: Մնացեալ շանց խումբն էր, որ առաջնորդութեամբ իրենց պետին կուգար մասնակցիլ այդ կարի հետաքրքրական արշաւանաց. դժուարաւ յաջողեցան հաւատարիմ անասուններն՝ իւրեանց տեղը դարձնել:

Երկու ժամէն վերջ, Վիլզէք կղզւոյն հարաւային արեւմտեան կողմը կը հասնէին: Հոն կանգ առին սառոյցի մը պատճառաւ:

Այդ կէտէն սկսեալ. — կորուսած էին Թէկէթօֆի հետքն. — ճանապարհն ներկայացուեցաւ իւրեանց իբր մի երկայն շղթայ սառոյցներու: Երեկոյին, վրանը հաստատուեցաւ կղզեակին վրայ:

Յաջորդ օրն, բարձրաւանդակ տեղէ մը նշմարեցին ծովու ընդարձակ տարածութիւն մը. շիրնալով բալխիւրներով կղզւոյն մէջէն անցնիլ, սահմանագիտոյն վրայէն հալլէ կրցան մտցնել գայնս, պէսպէս անանցաների խոշոգ ոտներն իսկ արհամարհելով: Սոյն աշխատութիւնն կատարուեցաւ ամենամեծ դժուարութեամբ, որուն կը մասնակցէին նաեւ չուններն արիարար: Եթէ Բլոյ, որ լըծման կը մասնակցէր, գաղբէր վայր կեան մը զանոնք գրգռել և իւր գորութիւնն յայանելէ, այն ստեն բալխիւրն կանգ պիտի առնէր:

Վերջապէս սառոյցներու մէջէն ճանապարհաւ հասան ընդարձակ դաշտագետնի մը վրայ, ուսկից կը նշմարուէր Հալլ կղզի ուր կը գտնուի Թէկէթօֆ հրուանդանն. և նորա գէմ արեւմտեան

կողմն Մաք Քլեմքոֆ կղզին : Ճանապարհն նշանակուած էր , և Թէկէքօժ հրուանդանին հասնելու համար , կը բաւէր ձիւնապատ և սառնապատ դաշտի մը մէջէն անցնիլ : Դժբաղդաբար , այնքան թանձր մառախուղ մ'եղաւ , որ հազիւ կրնային քալել՝ և այն իսկ ամենամեծ գժուարութեամբ :

« Ի լրումն աղետից , կ'ըսէ Բաեէս , ձիւնն՝ որ սկսաւ դալ , մթագնեց օդն , այնպէս որ քիչ մնաց արջ մը զմեզ իւր ճիրաններուն ներքեւ առնէր : Մեզ մօտեցած էր , երբ զայն տեսնեք մշուշին պատճառաւ ահաւոր ձևեր առած : Հըրացանն իսկոյն արձակեցինք , և գընդակը անյայտացաւ առանց արեան ո և է հետք մը թողելու : Բազմիցս նմանօրինակ նշաններ թողուցած ենք արջերուն վրայ և երբեմն իսկ ծանրապէս վիրաւորած , բայց կ'ըսեն թէ՝ այդ անասունք իրենց վէրքն իւրեանց ձեռօք կապելու սովորութիւն ունին , վերան ձեռամբ չիկելով թաթերուն միջոցաւ :

« Բեւեռային արջն , ի ներկայութեան մարդու , սոսկման և երկիւղի նշաններ կը յայտնէ , արդարեւ ուրիշ թշնամի չէ կրցած ճանաչել այդ սառնապատ լափերին թոսներուն մէջ , որոց թագաւորն է նա , ինչպէս չանսձուկն՝ մերձակոյ ծովուց : Գալով մարդուն , վերջինը չվհատիր երբ առանձին այդ բեւեռային կենդանւոյն հետ դէմ առ դէմ կը գտնուի , չը սոսկար երբ կը կռուի այդ հակառակօրդին հետ , որոյ միակ նպատակն է՝ կամ ուտել և կամ ուտուիլ :

« Միջօրէին , մի քանի ժամ հանգիստ ըրինք ճաշի համար :

« Այն սլահուն , յորում ճամբայ կ'ելնէինք տեսանք արջն մեր առջեւ : Եր-

կարատեւ պատերազմ մը ծագեցաւ մեր մէջ : Մեր նպատակի կէտէն բարեբաղդաբար այնքան հեռի չ'էինք գտնուեր , Թէկէքօժ հրուանդանին ժայռուտ գագաթներն տեսանելի կը լինէին : Գագանն խաղեր կ'ընէր մեր առջեւ , հազիւ մենէ հարկւր քայլ հեռի : Իւր մտին և ճարպին տիրանալու տենջովն վառեալ , այնպէս կը ցուցնէինք թէ՝ իւր ներկայութիւն մեզ կարեւոր չլիտի լինէր , որպէս զի աւելի քաջալերուելով՝ մօտենար մեր թակարթին : Եւ սառագիւ ըսկըսաւ յառաջանալ գէպ ի մեր վրանն , հողմոյն ուժգնութենէն մղեալ : Անմիջապէս բալխիրն իւր և մեր մէջ դրինք և ամենքս մէկ ականդարթի մէջ , սկսանք նիզակներ արձակել : Այդ միջոցին , մեր ընկերներէն մին ձեան մէջ նետած էր ձեռնոց մը , որոյ մէջ կը գտնուէր հացի պատառ մը : Գալով շանց , նոքա բալխիրին ետեւ , երկու պահապանաց հըսկողութեամբ կը մնային :

« Արջն միշտ կը մօտենար , երբեմն վարանոտ և զիկզակաձև :

« Հասնելով այն տեղն , որ էր հացն , կանգ առաւ : Այն միջոցին , հրացանի երեք հարուածներ պարսուեցան : Անասունը , թոքէն և գլխէն զարնուելով մեռաւ : Սոսկալի հաջիւններ լսելի եղան . շուներն էին , որք իրենց ծայրայեղ գոգոհութիւններն կը յայտնէին այդ որսորդութեան վրայ , որովհետեւ իրենք չէին մասնակցած :

« Պէտք էր տեսնել թէ ինչպիսի կատաղութեամբ զայն իրենց հետ ընդքարչ կ'ածէին . յարձակեցան անկենդան գաղանին վրայ և սկսան պատառել մորթն , և երբ կտրտեցինք մարմինն , մեր քով եկան ուշադիր ակնարկներով և տնկած ականջներով , հետեւելով հետաքրքրական գործողու-

թեան ամեն մանրամասնութեան :

« Անասունն՝ զոր սպանեցինք , էգ մ'էր 1 1/2 մեթր երկայնութեամբ :

« Յաջորդ օրն , մարտ 12 ին , մեկնման ժամանակ , ջերմաչափն կը ցուցունէր գէրօյէն վար 32⁰ : Հողմոյն դէմ քայլելով պատահեցանք ձեան փոթորիկ մը : Ամենուս քիթն սառեցաւ , բայց դիւրաւ կրցինք դարմանել զայն ձիւնով շիւկով : Որչափ կը մօտենայինք հրուանդանին , փոթորիկն կ'սկսէր մեղմանալ . ամբողջովին դադրած էր , երբ Թէկէքօն հրուանդանին դէմ հասանք : Թէկէքօն հրուանդանն կը վերջաւորէր սառոյցներէ 60 մեթր բարձրութեամբ :

« Մեր հոն հաստատումէն ժամ մը վերջն , կ'ըսէ Բաեէն գնդապետն , Թիւռօյցիք և ես սկսանք հրուանդանն ի վեր ելնելու փորձեր ընել :

« Ժամ մը քալեցինք ձեանց ներքեւէն ժամ մ'եւս թափառեցանք ժայռերուն մէջ , հասնելէն առաջ հրուանդանին ամենէն բարձր ծայրն ուր կաղմբուած էր 700 մեթր ընդարձակութեամբ լեռնադաշտ մը :

« Բարեխառնութիւնն էր 35⁰ գէրօյէն վար : Հակառակ մեր յոյսին , խիստ սահմանափակ տեսարան մ'ունեցանք , անթիւ և փոքր սառի թիւրեղներ , որոնցմով լի էր մթնոլորտն , այնքան տնթափանց և մթին կ'ընէին զայն որ Հալլ կղզւոյն արեւելեան եզերաց վրայ դրանուող Պէրկուս հրուանդանն իսկ բարակ քօղով մը ծածկուած կ'երևէր մեզ : Ամեն ինչ որ էր յայնկոյս հրուանդանին մեռչապատ կ'երևէր մեզ :

« Երկու ժամ վերջն , էական և գըլխաւոր գննութիւնք վերջացած ըլլալով , վերադարձանք մեր վրանն , ուր գտանք մեր ընկերներն , որք իրենց սառած անդամներն շիւկով զրաղեալ էին :

Թարգմ.

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

Նոր Հրատարակուած

ԻՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ՏՂՈՅ ԱԶՔՆ ՈՒ ԱԿԱՆՋԸ ԿԹԵԼՈՒ
ԵՂԱՆԱԿ



ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ


Մ. ՄԱՄՈՒԲԵԱՆ



Երկրորդ Տպագրութիւն



Գին կազմեալին 5 դահեկան :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՅԱՍԻՐԵԱՅ

ՄԻՔԱՑԻՂ ԻԾ. ԱՇՃԵԱՆ



ՀԱՏՈՐ Բ.

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գին 5 դահեկան :

Երկու հատորն ի միասին 8 դահեկան :

Կեդրոնատեղին է հանդիսիս տպարանն , Կ. Պօլիս Էսկի Զապթիէ ճատտէսի , թիւ 61 :





Ահա պստալից ուս մը , բայց ո՛ր է բռնուն

ԼՈՒԾՈՒՄՆ ԹԻՒ 23 ՀԱՆԵԼՈՒԿԻ
ՀԱՅՐ — ԱՅՐ — Ա՛Յ — Ա՛ — Ա

ԼՈՒԾՈՒՄՆ ԹԻՒ 24 ՀԱՆԵԼՈՒԿԻ
ԼԱՐԱԽԱՂԱՑ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ 25
Հրէս մը կը ճանչնամ ես .
Բերան չունի կը մոռնէ .
Կոկորդ չունի մարդ կ'լսէ .
Մերք կայսերց սիրս դող ճանէ :

ՊԵՏԱՆԿԱՆ ՍԵՐԻԱԿԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿ 26
— Ո՛ր կ երբաս , սե՛ւ աղբար ,
— Դեզի ի՞նչ , ծակ գլուխ .

ԿԱՐՆԵՑԻՆ

ՀԱՆԵԼՈՒԿ 27

Տղայ մ'ունիմ անգղայ
Կես սնայ ի՞նչպիսի
Անօթեան չի լայ :

ՆՈՅՆ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ 28

Եղբա՛յր , ունէի մի բնակարան
Որ ունէր վեց պատ , ոչ դուռ պատահան ,
Թշնամիներս տունս փանդեցին ,
Եւ զիս նորա մէջէն դուրս հանեցին ,
Յետոյ զիս ստաւնով մը պատեցին ,
Անգուրք ուրախութեամբ զիս այրեցին :

ԵՌԻՍ

Մ. ՄԱՐԳԻՍ Գ. ԳԱԹՐԱՆԵԱՆ

Լ. Ե. Հայկ. Վրժ. Գրեհնրի

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՊԱԳՐԻՉ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՉ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Կ. ՊՕԼԻԱ , ԷՍԿԻ Զապրիէ հաստատի քիւ 61